ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2021/56

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2021 թ. N 56

«ԵՐԵՎԱՆԻ«ԳԼԱՁՈՐ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՈՒԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Երևանի «Գլաձոր» համալսարան» ՈՒԱԿ /ԵԳՀ/
Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ 7/1

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **ինստիտուցիոնալ հավատարմագրում, 4 տարի ժամկետով՝ 21.03.2015թ.- 21.03.2019թ**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021 թվականի հուլիսի 24-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Երևանի «Գլաձոր» համալսարան» ՈՒԱԿ-ի (այսուհետ՝ ԵԳՀ, Համալսարան) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 20 մարտի 2019թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 3 մարտի 2020թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 14-17 դեկտեմբերի 2020թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 19 մարտի 2021թ.
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝ 30 ապրիլի 2021թ.

«Երևանի «Գլաձոր» համալսարան» ՈՒԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայնացում», «Որակի ներքին ապահովման համակարգ»** չափանիշները գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ԵԳՀ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի դիտողություններն ու առաջարկությունները, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, բուհի կողմից տրամադրված տեղեկանքն իրականացվող աշխատանքների վերաբերյալ, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ԵԳՀ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

ԵԳՀ-ն 2015 թվականին անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց և, հաշվի առնելով գործընթացի շրջանակում ստացված խորհրդատվությունները, կազմել է բարելավման գործողությունների ծրագիր: Համալսարանը մի շարք ոլորտներում իրականացրել է բարելավմանը միտված փոփոխություններ:

1. Համալսարանը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում

Նախորդ հավատարմագրումից հետո վերանայվել և մշակվել են վերջնարդյունքահեն մասնագիտության կրթական ծրագրեր (ՄԿԾ): Գործատուների հետ անմիջական կապը նպաստել է ՄԿԾ-ների բարելավմանը, իրականացվում են որոշակի մշտադիտարկումներ և քննարկումներ շահակիցների հետ ՄԿԾ-ների կատարելագործման ուղղությամբ: Կատարվել են նաև քայլեր գնահատման մեթոդները վերջնարդյունքներին համապատասխանեցման ուղղությամբ: Մշակվել և ներդրվել են ավարտական աշխատանքների կատարման և պաշտպանության կազմակերպման ուղեցույցեր:

ՄՈՒՀ-ը հիմնականում ապահովված է համապատասխան մասնագիտական որակներ, գիտական կոչում և աստիճան ունեցող, պրակտիկ կարողություններով օժտված պրոֆեսորադասախոսական կադրերով, չնայած նրանց մեծ մասն աշխատում է համատեղությամբ կամ ժամավճարային կարգով:

Առկա են ՊԴ կազմի ընտրության, ձևավորման ընթացակարգերը, սակայն շատ դեպքերում որոշիչը անձնական մոտեցումներն են: Գործում են նաև դասախոսական կազմի կարիքների վերհանման որոշ մեխանիզմներ

Համալսարանում նկատելի են քայլերը նյութատեխնիկական բազայի բարելավման ուղղությամբ: Լսարանների և մասնագիտական սենյակների տեխնիկական հագեցվածությունը, նյութական ռեսուրսների ձեռք բերման պատրաստակամությունը, ֆինանսական ռիսկերի չեզոքացման հնարավորությունները խոսում են ուսումնական միջավայրի բարելավման մասին:

2. Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը

ԵԳՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն որոշակիորեն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները: Կառավարման համակարգը, չնայած բազում փաստաթղթերի և դրանցում ներառված կարգավորումների առկայությանը, դեռևս բավարար ինստիտուցիոնալիզացված չէ:

ՄՈՒՀ-ը հիմնականում կառավարվում է ինտուիտիվ մոտեցումներով և մասնակցային կառավարման համակարգը թերի է գործարկված:

ՄՈՒՀ-ը կարևորում է որակի ապահովման համակարգը, ջանքեր է գործադրում զարգացման նպատակով, սակայն այն դեռևս ձևավորման փուլում է, որոշումների կայացման ընթացքում որակի ապահովման համակարգված մեխանիզմները դեռևս թույլ ազդեցություն ունեն: Քաղաքականությունները և ընթացակարգերը ՄՈՒՀ-ում դեռևս չեն գնահատվել և փոփոխությունները հիմնականում իրականացվում են իրավիճակի ազդցությամբ:

3. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն:

ՄՈՒՀ-ի հետազոտական հավակնությունները դեռևս հստակեցված չեն և ուղղորդված ջանքեր այս ուղությամբ չեն նկատվում: Կան առանձին դասախոսներ, որոնք գիտական բարձր ակտիվություն ունեն, սակայն առկա են հիմնարար խնդիրներ ինստիտուցիոնալ մոտեցումների և համակարգման առումով: Չնայած հետազոտությունների ուղղությամբ ներքին դրամաշնորհների ներդրման պլաններին, որոշ սեմինարների կազմակերպմանը, դրանք դեռևս բավարար չեն: ԵԳՀ-ում բացակայում է հետազոտության ն ուսումնական գործընթացների փոխկապակցվածության քաղաքականությունը: ՈՒԳԸ-ի կողմից կազմակերպված գիտական նստաշրջանները կարևոր են, սակայն դրանք ներբուհական են և հնարավորություններ չեն ստեղծում ուսանողների աշխատանքների միջազգայնացմանը:

Արտաքին հարաբերություններում առաջնահերթ է տեղական կազմակերպությունների հետ կապերի ձևավորումը, ինչն արդյունավետորեն իրականացվում է և նպաստում է որակավորումների արժանահավատ շնորհմանը: Միջազգայնացումը դեռևս սաղմնային փուլում է, սակայն որոշակի աշխատանքներ արդեն իսկ կատարվում են այդ ուղղությամբ, ստեղծվել է համապատասխան բաժին:

ԵԳՀ-ում առկա են ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության քաղաքականություն, կիրառվում են կրթական գործընթացների և ընթացակարգերի

հասանելիության մեխանիզմներ: ԲՈՒՀ-ի կողմից հասարակությանը տրամադրվում են խորհրդատվական ծառայություններ:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը հիմնականում իրատեսական է և արտահայտում է խնդիրների ճիշտ ընկալումը, որոնց իրականացումը կբերի որակական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Երևանի «Գլաձոր» համալսարան» ՈՒԱԿ-ին** շնորհել ինստիտուցիոնալ **հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Ենթակառուցվածք և ռեսուրսներ», «Որակի ապահովման ներքին համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. Հատուկ ուշադրություն դարձնել.
   - արդյունքահեն կառավարման համակարգի բարելավմանը, բարելավման գործընթացներին արտաքին շահակիցների ներգրավմանը,
   - վերլուծությունների, հստակ քանակական և որակական տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը և հաշվետվությունների իրականացմանը,
   - դասախոսների գնահատման և կատարելագործման, վերապատրաստումների, խրախուսման գործընթացների կանոնակարգման և մեխանիզմների լրարժեք կիրառմանը,
   - հիմնական ու կայուն պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ապահովվմանը,
   - հետազոտական գերակայությունների վերհանմանը, ռազմավարության ձևավորմանը,
   - ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը,
   - Համալսարանի գործունեության վրա որակի ապահովման գործընթացների ազդեցության բարձրացմանը,
   - որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությանը:

4. Կազմակերպել ԵԳՀ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ԵԳՀ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2021 թ. հուլիսի 24
ք.Երևան